

**ԿՈՆՎԵՆՑԻԱ  
ԾՈՎՈՒՄ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԻՑ ՎԻՐԱՎՈՐՆԵՐԻ, ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ  
ՆԱՎԱԲԵԿՅԱԼՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ՄԱՍԻՆ**

Ներքոստորագրյալները, այս դիվանագիտական համաժողովում ներկայացված կառավարությունների լիազորները, որոնք 1949 թվականի ապրիլի 21-ից մինչեւ օգոստոսի 18-ը ժնեւում նիստեր էին գումարել՝ 1907 թվականի հոկտեմբերի 18-ի Համագույն կոնվենցիան վերանայելու եւ 1906 թվականի ժնեւի կոնվենցիայի սկզբունքները ծովային պատերազմում կիրառելու նպատակով, կնքեցին հետեւյալ համաձայնագիրը.

**ԳԼՈՒԽ 1  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**ՀՐԴՎԱԾ 1  
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՊԱՀԱՊԱՆՈՒՄԸ**

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են ցանկացած հանգամանքներում պահպանել եւ ստիպել պահպանելու սույն Կոնվենցիան:

**ՀՐԴՎԱԾ 2  
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՋՈՒՄԸ**

Բացի այն որոշումներից, որոնք պետք է ուժի մեջ մտնեն դեռեւ խաղաղ ժամանակ, սույն Կոնվենցիան կկիրառվի հայտարարված պատերազմի կամ ցանկացած այլ գինված ընդհարման դեպքում, որը ծագում է երկու կամ մի քանի Բարձր պայմանավորվող կողմերի միջեւ, անգամ եթե դրանցից մեկը չի ընդունում պատերազմական վիճակը:

Կոնվենցիան կկիրառվի նաեւ Բարձր պայմանավորվող կողմի ամբողջ տարածքի կամ

դրա մի մասի գրավման բոլոր դեպքերում, անգամ եթե այդ գրավումը ոչ մի գինված

դիմադրության չհանդիպի:

Եթե ընդհարման մեջ գտնվող տերություններից մեկը չի հանդիսանում սույն Կոնվենցիայի մասնակից, Կոնվենցիայի մասնակից տերություններն իրենց փոխհարաբերություններում, այնուամենայնիվ, կմնան նրանով կապված: Դրանից բացի,

դրանք Կոնվենցիայով կապված կլինեն վերը նշված տերության վերաբերմամբ, եթե

վերջինս ընդունում եւ կիրառում է Կոնվենցիայի դրույթները:

**ՀՐԴՎԱԾ 3  
ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԲՆՈՒյԹ ՀԿՐՈՂ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ**

Միջացգային բնույթ Հկրող եւ Բարձր պայմանավորվող կողմերից մեկի տարածքում

ծագող գինված ընդհարման դեպքում ընդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ

պարտավոր է առնվազն կիրառել հետեւյալ դրույթները.

1. Անձինք, որոնք անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին, ներառյալ զինված ուժերի կազմից այն անձինք, ովքեր գենքը վայր են դրել, ինչպես նաև նրանք, ովքեր դադարել են ռազմական գործողություններին մասնակցել՝ հիվանդության, վիրավորվելու, ձերբակալվելու կամ

ցանկացած այլ պատճառով, պետք է բոլոր հանգամանքներում օգտվեն մարդասիրական

վերաբերմունքից՝ առանց ռասայի, մաշկի գույնի, կրոնի կամ հավատի, սերի, ծագման

կամ գույքային դրության կամ ցանկացած այլ համանման չափանիշների պատճառներով

որեւէ աննպաստ տարբերակման:

Այդ նպատակով վերը նշված անձանց նկատմամբ արգելվում են եւ մշտապես ու ամենուրեք կարգելվեն հետեւյալ գործողությունները.

ա) կյանքի եւ ֆիզիկական անձեռնմխելիության դեմ ուղղված ոտնձգությունը, մասնավորապես, բոլոր տեսակի սպանությունները, խեղումները, դաժան վերաբերմունքը, խոշտանգումները եւ տանջահարությունը,

բ) պատանդ վերցնելը,

գ) անձի արժանապատվության դեմ ուղղված ոտնձգությունը, մասնավորապես, վիրավորական եւ նվաստացուցիչ վերաբերմունքը,

դ) դատապարտումը եւ պատժի կիրառումը՝ առանց քաղաքակիրթ ազգերի կողմից

անհրաժեշտ ճանաչված դատական երաշխիքների առկայությամբ պատշաճ կերպով հիմնված

դատարանի կայացրած նախնական դատական որոշման:

2. Վիրավորներին, հիվանդներին եւ նավաբեկյալներին կիավաքեն, եւ նրանց ցույց կտրվի օգնություն:

Որեւէ անկողմնակալ մարդասիրական կազմակերպություն, ինչպիսին, օրինակ, Կարմիր խաչի միջազգային կոմիտեն է, կարող է իր ծառայություններն առաջարկել

ընդհարման մեջ գտնվող կողմերին:

Դրանից բացի, ընդհարման մեջ գտնվող կողմերը կձգտեն հատուկ համաձայնագրերի

միջոցով գործողության մեջ դնել սույն Կոնվենցիայի բոլոր մնացյալ դրույթները կամ դրանց մի մասը:

Նախորդ դրույթների կիրառումը չի շոշափի ընդհարման մեջ գտնվող կողմերի իրավական կարգավիճակը:

#### ՀՐՈՎԱԾ 4 Կիրառման ոլորտը

Ընդհարման մեջ գտնվող կողմերի ցամաքային եւ ծովային ուժերի միջեւ պատերազմական գործողությունների դեպքում սույն Կոնվենցիայի դրույթները կիրառվում են միայն նավերի վրա գտնվող ուժերի նկատմամբ:

Այս դուրս եկած այդ ուժերի վրա անմիջապես տարածվում են 1949 թվականի օգոստոսի 12-ի "Գործող բանակներում վիրավորների եւ հիվանդների վիճակի բարելավման մասին" Ժնևի կոնվենցիայի դրույթները:

#### ՀՐՈՎԱԾ 5 Կիրառումը չեզոք տերությունների կողմից

Չեզոք տերությունները սույն Կոնվենցիայի դրույթները համանման ծերով  
կկիրառեն այն վիրավորների, իիվանդների եւ նավաբեկյալների, բժշկական եւ  
հոգեւոր  
անձնակազմերի նկատմամբ, որոնք պատկանում են ընդհարման մեջ գտնվող  
կողմերի  
զինված ուժերին եւ որոնք ընդունվել կամ ներկալվել են իրենց տարածքում,  
ինչպես  
նաեւ հավաքված մահացածների նկատմամբ:

### ՀՐԴՎԱԾ 6

#### Հատուկ համաձայնագրերը

Բացի 10, 18, 31, 38, 39, 40, 43 եւ 53 հոդվածներով հատկապես նախատեսված  
համաձայնագրերից, Բարձր պայմանավորվող կողմերը կարող են կնքել ուրիշ  
հատուկ  
համաձայնագրեր որեւէ հարցի առթիվ, որը նրանք նպատակահարմար կգտնեն  
կարգավորել  
առանձին: Ոչ մի հատուկ համաձայնագիր չպետք է վսաս հասցնի հիվանդների,  
վիրավորների եւ նավաբեկյալների, ինչպես նաեւ բժշկական եւ հոգեւոր  
անձնակազմի՝  
սույն Կոնվենցիայով սահմանված վիճակին, ոչ էլ սահմանափակի այդ  
Կոնվենցիայով  
Նրանց տրամադրված իրավունքները:

Հիվանդները, վիրավորները եւ նավաբեկյալները, ինչպես նաեւ բժշկական եւ  
հոգեւոր անձնակազմն այդ համաձայնագրերի արտոնություններից կշարունակեն  
օգտվել  
այլքան ժամանակ, քանի դեռ Նրանց նկատմամբ կիրառելի կլինի Կոնվենցիան,  
բացի  
վերոհիշյալ կամ ավելի ուշ կնքված համաձայնագրերի մեջ հատուկ պարունակվող  
հակառակ դրույթների կամ հավասարապես, ընդհարման մեջ գտնվող կողմերից  
մեկի կամ  
մյուսի՝ Նրանց նկատմամբ առավել նպաստավոր միջոցառումներ կիրառելու  
դեպքերի:

### ՀՐԴՎԱԾ 7

#### Իրավունքների անօտարելիությունը

Հիվանդները, վիրավորները եւ նավաբեկյալները, ինչպես նաեւ բժշկական եւ  
հոգեւոր անձնակազմը, ոչ մի դեպքում չեն կարող մասնակիորեն կամ լիովին  
հրաժարվել նախորդ հոդվածով նախատեսված այն իրավունքներից, որոնք Նրանց  
համար  
ապահովում են սույն Կոնվենցիան կամ հատուկ համաձայնագրերը, եթե  
այդպիսիք  
գոյություն ունեն:

### ՀՐԴՎԱԾ 8

#### Հովանավոր տերությունները

Սույն Կոնվենցիան կկիրառվի այն հովանավոր տերությունների աջակցությամբ  
եւ

դրանց վերահսկողության ներքո, որոնց վրա է դրված ընդհարման մեջ գտնվող կողմերի շահերի պաշտպանությունը: Այդ նպատակով հովանավոր տերությունները կարող են, բացի իրենց դիվանագիտական կամ հյուպատոսական անձնակազմից, նշանակել պատվիրակների իրենց սեփական քաղաքացիների կամ այլ չեզոք տերությունների քաղաքացիների թվից: Այդ պատվիրակների նշանակման համար պետք է ստացվի այն տերության համաձայնությունը, որին առընթեր նրանք պետք է կատարեն իրենց առաքելությունը: Ընդհարման մեջ գտնվող կողմերը, առավելագույն հնարավորության սահմաններում, կոյուրացնեն հովանավոր տերությունների ներկայացուցիչների կամ պատվիրակների աշխատանքը:

Յովանավոր տերությունների ներկայացուցիչները կամ պատվիրակները ոչ մի դեպքում չպետք է դուրս գան իրենց այն առաքելության շրջանակներից, որը սահմանված է սույն Կոնվենցիայով. Նրանք, մասնավորապես, պետք է ուշադրության առնեն այն պետության անվտանգության անհետաձգելի կարիքները, որին առընթեր կատարում են իրենց գործառույթները: Միայն ռազմական անհետաձգելի պահանջները կարող են տալ նրանց գործողությունը ժամանակավորապես եւ բացառության կարգով սահմանափակելու իրավունք:

### ՀՐԴՎԱԾ 9

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գործունեությունը

Սույն Կոնվենցիայի դրույթները խոչընդոտ չեն հանդիսանում այն մարդասիրական գործողությունների համար, որոնք Կարմիր խաչի միջազգային կոմիտեն կամ ցանկացած այլ անկողմնակալ մարդասիրական կազմակերպություն ընդհարման մեջ գտնվող շահագրգիռ կողմերի համաձայնությամբ կձեռնարկեն վիրավորների, հիվանդների եւ նավարեկյալների, ինչպես նաև բժշկական եւ հոգեւոր անձնակազմի պաշտպանության եւ նրանց օգնություն ցույց տալու համար:

### ՀՐԴՎԱԾ 10

Յովանավոր տերությունների փոխարինորդները

Բարձր պայմանավորվող կողմերը ցանկացած ժամանակ կարող են համաձայնության գալ այն մասին, որպեսզի անկողմնակալության եւ արդյունավետության լիակատար երաշխիք ներկայացնող որեւէ կազմակերպության վստահեն հովանավոր տերությունների վրա սույն Կոնվենցիայով դրվող պարտականությունները:

Եթե վիրավորների, հիվանդների եւ նավաբեկյալների կամ բժշկական եւ հոգեւոր անձնակազմի վրա չի տարածվում կամ ինչ-որ պատճառով դադարել է տարածվել որեւէ հովանավոր տերության կամ առաջին պարբերության մեջ նախատեսված կազմակերպության գործունեությունը, ապա այս տերությունը, որի իշխանության տակ են գտնվում հովանավորվող անձինք պետք է դիմի կամ որեւէ չեզոք պետության կամ այդպիսի կազմակերպության՝ ինդրելով ստանձնել այն գործառույթները, որոնք ընդհարման մեջ գտնվող կողմերի նշանակած հովանավոր տերությունների կողմից կատարվում են սույն:

Կոնվենցիային համապատասխան:

Եթե չի հաջողվում նշված ձեւով հովանավորություն իրականացնել, ապա տերությունը, որի իշխանության տակ են գտնվում հովանավորվող անձինք, պետք է ինդրանքով դիմի որեւէ մարդասիրական կազմակերպության, ինչպիսին է, օրինակ,

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն՝ կատարելու սույն Կոնվենցիայով հովանավոր տերությունների վրա դրված մարդասիրական պարտականությունները, կամ, սույն հոդվածի դրույթների հաշվառմամբ, ընդունի այդպիսի կազմակերպության՝ ծառայություն մատուցելու առաջարկությունը:

Յուրաքանչյուր չեզոք տերություն կամ յուրաքանչյուր կազմակերպություն, որը հրավիրվել է շահագրգիռ տերության կողմից կամ որևէ իրեն առաջարկել է վերը նշված

Նպատակների համար, պետք է գործի ընդհարման մեջ գտնվող այն կողմի նկատմամբ պատասխանատվության գիտակցումով, որի մոտ են գտնվում սույն Կոնվենցիայի պաշտպանությունից օգտվող անձինք եւ տրամադրի բավարար երաշխիքներ, որ ինքը ի վիճակի է ստանձնել համապատասխան գործառույթներ եւ դրանք կատարել անաշխատ կերպով:

Նախորդ դրույթները չեն կարող խախտվել տերությունների միջեւ կնքված հատուկ համաձայնագրերով, եթե այդ տերություններից մեկը, պատերազմական իրադրության բերումով, անգամ ժամանակավորապես, սահմանափակված է մյուս տերության կամ դրա դաշնակցների հետ ազատորեն բանակցություններ վարելու իր հնարավորություններում, հատկապես այն դեպքերում, երբ տվյալ տերության ամբողջ

տարածքը կամ զգալի մասը գրավված է:

Ամեն անգամ, երբ սույն Կոնվենցիայի մեջ հիշատակվում է հովանավոր տերություն, այդ անվանումը սույն հոդվածի համաձայն նշանակում է նաեւ դրան փոխարինող կազմակերպություն:

Բոլոր դեպքերում, երբ նրանք դա օգտակար կհամարեն ի շահ հովանավորվող անձանց եւ, մասնավորապես, սույն Կոևսենցիայի դրույթների կիրառման կամ մեկնաբանման առթիվ ընդհարման մեջ գտնվող կողմերի միջեւ տարածայնությունների դեպքում, հովանավոր տերություններն իրենց բարի ծառայությունները կմատուցեն՝ տարածայնությունները կարգավորելու նպատակով:

Այդ նպատակով, հովանավոր տերություններից յուրաքանչյուրը, կողմերից որեւէ

մեկի խնդրանքով կամ սեփական նախաձեռնությամբ կարող է ընդհարման մեջ գտնվող

կողմերին առաջարկել պատշաճ կերպով ընտրված հնարավոր չեզոք տարածքում կազմակերպելու նրանց ներկայացուցիչների եւ, մասնավորապես, այն իշխանությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որոնց վրա է դրված վիրավորների, հիվանդների եւ նավաբեկյալների, ինչպես նաև բժշկական եւ հոգեւոր

անձնակազմի վիճակի նկատմամբ հոգատարությունը: Ընդհարման մեջ գտնվող կողմերը

պարտավոր են ընթացք տալ այն առաջարկություններին, որոնք այդ առումով նրանց

կարվեն: Անհրաժեշտության դեպքում հովանավոր տերությունները կարող են ընդհարման

մեջ գտնվող կողմերի հավանությանը ներկայացնել չեզոք տերությանը պատկանող կամ

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից որպես պատվիրակ ուղարկված անձին, որը

կիրավիրվի մասնակցելու այդ խորհրդակցությանը:

## Գլուխ 2

Վիրավորները, հիվանդները եւ նավաբեկյալները

### ՀՈԴՎԱԾ 12

Պաշտպանությունը, վարչելակերպը եւ բուժօգնությունը

Զինված ուժերի անձնակազմը եւ հաջորդ հոդվածում նշված այլ անձինք, որոնք, ծովում գտնվելիս վիրավոր, հիվանդ կամ նավաբեկյալ կլինեն, բոլոր պարագաներում

պետք է օգտվեն հովանավորությունից եւ պաշտպանությունից: Ըստ որում, "Նավաբեկություն" տերմինը կիրառվում է ցանկացած նավաբեկության նկատմամբ, անկախ

այն հանգամանքներից, որոնցում այն տեղի է ունեցել, այդ թվում՝ օդանավերի՝ ծովի

վրա հարկադրական վայրեջք կատարելու կամ ծովս ընկնելու դեպքերում:

Ընդհարման մեջ գտնվող այն կողմը, որի իշխանության տակ կհայտնվեն նրանք,

նրանց համար կապահովի մարդասիրական վերաբերմունք եւ խնամք՝ առանց այնպիսի

խտրականության, ինչպիսիք են՝ սեղը, ռասան, ազգությունը, կրոնը, քաղաքական համոզմունքները կամ մյուս համանման չափանիշները: Խստիվ արգելվում է ոտևածությունը նրանց կյանքի եւ անձի հանդեպ եւ, մասնավորապես, արգելվում է

Նրանց վերջ տալ կամ կոտորել, Ենթարկել խոշտանգումների, Նրանց վրա կատարել  
կենսաբանական փորձեր, միտումնավոր կերպով թողնել առանց բուժօգնության  
եւ  
ինամբի, կանխամտածված կերպով պայմաններ ստեղծել Նրանց վարակման  
համար:

Բուժօգնություն ցուցաբերելու հերթականության մեջ առաջնահերթություն  
թույլատրվում է միայն անհետաձգելի բնույթի բժշկական պատճառներով:

Կանաց Նկատմամբ կվարվեն Նրանց սեռին պատշաճ առանձնահատուկ  
հարգանքով:

### ՀՈԴՎԱԾ 13 Հովանավորվող անձինք

Սույն Կոնվենցիան կիրառվի հետեւյալ կատեգորիաներին պատկանող  
Նավարեկյալների, վիրավորների եւ հիվանդների Նկատմամբ.

1. Ընդհարման մեջ գտնվող կողմի զինված ուժերի անձնակազմը, ինչպես նաև  
այդ  
զինված ուժերի կազմի մեջ մտնող աշխարհազորային եւ կամավորական  
ջոկատների  
անձնակազմը:

2. Մյուս աշխարհազորայինների եւ կամավորական ջոկատների անձնակազմը՝  
Ներառյալ դիմադրության կազմակերպված այն շարժումների անձնակազմը,  
որոնք

պատկանում են ընդհարման մեջ գտնվող կողմին եւ գործում են իրենց սեփական  
տարածքում կամ դրանց դուրս, եթե անգամ այդ տարածքը գրավված է, եթե այդ  
աշխարհազորայինները եւ կամավորական ջոկատները, Ներառյալ՝ դիմադրության  
կազմակերպված շարժումները, համապատասխանում են Ներքոհիշյալ  
պայմաններին.

ա) Ենթականների համար ուսեն պատասխանատու ղեկավար անձ,  
բ) ուսեն որոշակի եւ հեռվից պարզորոշ երեւացող տարբերանշան,  
գ) գենքը կրում են բացեիբաց,  
դ) իրենց գործողություններում պահպանում են պատերազմի օրենքներն ու  
սովորույթները:

3. Այս կանոնավոր զինված ուժերի անձնակազմը, որն իրեն համարում է այս  
կառավարության կամ իշխանության Ենթակայության տակ, որը չի ճանաչվել  
գերության

մեջ պահող տերության կողմից:

4. Զինված ուժերի Ենթեւց ընթացող, բայց անմիջականորեն դրանց կազմի մեջ  
չմտնող անձինք, ինչպես, օրինակ, ռազմական ինքնաթիռների անձնակազմի մեջ  
մտնող

քաղաքացիական անձինք, զինվորական թղթակիցները, մատակարարները,  
աշխատանքային

իսրերի եւ ծառայությունների անձնակազմը, որոնց վրա դրված է զինված ուժերի  
կենցաղային սպասարկումը, պայմանով, որ նրանք դրա թույլտվությունը ստացել  
են

այս զինված ուժերի կողմից, որոնց Նրանք ուղեկցում են:

5. Առեւտրական Նավատորմի Նավերի անձնակազմների անդամները, Ներառյալ՝  
Նավապետները, Նավատարներն ու Նավի փոքրավորները, եւ ընդհարման մեջ  
գտնվող

կողմերի քաղաքացիական ավիացիայի այն անձնակազմերի անդամները, որոնք միջազգային

իրավունքի այլ դրույթների համաձայն չեն օգտվում առավել արտոնյալ ռեժիմից:

6. Զգրավված տարածքի բնակչությունը, որը հակառակորդի մոտենալուն համեմատ՝

տարերայնորեն գենք է վերցնում պայքարելու ներխուժող զորքերի դեմ, բայց դեռ չի

հասցել ձեւավորվել որպես կանոնավոր զորք, եթե նա գենքը կրում է բացեիբաց եւ

պահպանում պատերազմի օրենքներն ու սովորույթները:

### ՀՐԴՎԱԾ 14 Հանձնումը մարտնչող կողմին

Մարտնչող կողմի ցանկացած ռազմանավ կարող է պահանջել հանձնել այն վիրավորներին, հիվանդներին կամ նավարեկյալներին, որոնք գտնվում են ռազմական

նավ-հոսպիտալների, փրկարար կազմակերպությունների կամ անհատ անձանց նավ-հոսպիտալների, ինչպես նաև առեւտրանավերի, զբոսանավերի կամ փոքր նավերի

վրա՝ ինչպիսին ել լինի այդ նավերի ազգային պատկանելությունը, եթե վիրավորների

եւ հիվանդների առողջական վիճակը թույլ է տալիս այդ հանձնումը, եւ եթե ռազմանավն ի վիճակի է ապահովել վերջիններիս բավարար բժշկական սպասարկումը:

### ՀՐԴՎԱԾ 15 Չեզոք ռազմանավի կողմից վերցված վիրավորները

Եթե վիրավորները, հիվանդները կամ նավարեկյալները վերցվել են չեզոք ռազմանավի կամ չեզոք ռազմական օդանավի կողմից, ապա հարկ է հոգալ, որպեսզի այն

դեպքերում, երբ դա պահանջում է միջազգային իրավունքը, նրանք դարձյալ չմասնակցեն ռազմական գործողությունների:

### ՀՐԴՎԱԾ 16 Հակառակորդի իշխանության տակ հայտնված վիրավորները

Հոդված 12-ի դրույթները հաշվի առնելով՝ պատերազմող կողմի՝ հակառակորդի իշխանության տակ հայտնված վիրավորները, հիվանդները եւ նավարեկյալները կիամարվեն ռազմագերիներ, եւ նրանց նկատմամբ կկիրառվեն ռազմագերիներին վերաբերող միջազգային իրավունքի նորմերը: Գերեվարողն ըստ իր հայեցողության եւ

և այած հանգամանքների կարող է որոշել՝ պահել նրանց, ուղարկել իր երկրի որեւէ նավահանգիստ, չեզոք կամ նույնիսկ հակառակորդի որեւէ նավահանգիստ:

Վերջին

դեպքում, իրենց երկրին հանձնված ռազմագերիները, պատերազմի ողջ ընթացքում չեն

կարող մասնակցել ռազմական գործողություններին:

### ՀՐԴՎԱԾ 17

## Չեզոք նավահանգստում ափ իշեցված վիրավորները

Չեզոք նավահանգստում ափ իշած վիրավորները, հիվանդները եւ նավաբեկյալները,  
տեղական իշխանության համաձայնությամբ, եթե միայն չեզոք տերությունը  
հակառակ  
պայմանավորվածություն չունի պատերազմող տերությունների հետ, պետք է  
պահիվ է  
չեզոք տերության կողմից այնպես, որպեսզի այն դեպքերում, երբ դա պահանջում  
է

Միշազգային իրավունքը, նրանք չկարողանան դարձյալ մասնակցել  
պատերազմական  
գործողություններին:

Յոսպիտալացման եւ ներկալման ծախսերն ընկնում են այն տերության վրա,  
որին  
պատկանում են հիվանդները, վիրավորները կամ նավաբեկյալները:

## ՀՈԴՎԱԾ 18 Մարտից հետո տուժածների որոնումը

Յուրաքանչյուր մարտից հետո ընդհարման մեջ գտնվող կողմերը անհապաղ  
ձեռք

կառնեն բոլոր հնարավոր միջոցները՝ որոնելու եւ հավաքելու համար  
նավաբեկյալներին, վիրավորներին եւ հիվանդներին, նրանց պաշտպանելու  
կողոպուտից  
ու վատ վերաբերմունքից եւ նրանց ապահովելու անհրաժեշտ խնամքով, ինչպես  
նաև  
որոնելու մահացածներին եւ թույլ չտալու դիակապություն:

Ամեն անգամ, երբ հանգամանքները թույլ են տալիս, ընդհարման մեջ գտնվող  
կողմերը տեղական համաձայնություն կկնքեն՝ պաշարված կամ շրջափակված  
գոտուց  
վիրավորներին ու հիվանդներին ծովով տարահանելու, ինչպես նաև այդ գոտի՝  
բժշկական եւ հոգեւոր անձնակազմի եւ սանհտարական միջոցների անցկացման  
վերաբերյալ:

## ՀՈԴՎԱԾ 19 Տվյալների գրանցումը եւ հաղորդումը

Ընդհարման մեջ գտնվող կողմերը պետք է հնարավոր ամենակարճ ժամկետում  
գրանցեն հակառակորդ կողմի՝ իրենց ձեռքն ընկած նավաբեկյալների,  
հիվանդների,  
վիրավորների եւ մահացածների ինքնությունը պարզելուն նպաստող բոլոր  
տվյալները:

Այդ տեղեկությունները պետք է, ըստ հնարավորին, արտացոլեն հետեւյալ  
տվյալները.

- ա) տերությունը, որին պատկանում է տվյալ անձը,
- բ) զիսվորական կամ անձնական համարը,
- գ) ազգանունը,
- դ) անունը կամ անունները,
- ե) ծննդյան թիվը,

գ) անձնական վկայականի մեջ կամ ճանաչման մեղալիոնի վրա նշված մյուս բոլոր տեղեկությունները,

Ե) գերի ընկնելու կամ մահվան թվականը եւ տեղը,

Ծ) վիրավորվելուն, հիվանդությանը կամ մահվան պատճառներին վերաբերող տեղեկությունները:

Վերը հիշատակված տվյալները պետք է, ըստ հնարավորին, արագորեն հասցվեն

"Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին" 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի

կոնվենցիայի 122 հոդվածով նախատեսված տեղեկատու բյուրոյի գիտությանը, որը

հովանավոր տերության եւ ռազմագերիների գործերի կենտրոնական գործակալության

միջնորդությամբ այդ տեղեկությունները կհանձնի այն տերությանը, որին, պատկանում

է այդ անձը:

Ըստիհարման մեջ գտնվող կողմերը պետք է պատրաստեն եւ այդ նույն բյուրոյի միջնորդությամբ միմյանց ուղարկեն մահվան վկայականները կամ մահացածների՝ հարկ

եղածին պես հաստատված ցուցակները: Նրանք կհավաքեն եւ նույն բյուրոյի միջնորդությամբ միմյանց կհանձնեն կրկնակի ճանաչման մեղալիոնի կեսը, կամ մեղալիոնն ինքը, եթե այն սովորական է, կտակները եւ մահացածի ընտանիքի համար

Նշանակություն ունեցող այլ փաստաթղթերը, դրամը եւ, առհասարակ, մահացածի մոտ

գտնված բոլոր այն առարկաները, որոնք ունեն օբյեկտիվ կամ սուբյեկտիվ արժեք: Այդ, ինչպես նաև չճանաչված իրերը, կուղարկվեն կնքված փաթեթներով, որոնց կհավելվեն դրանց մահացած տերերի ինքնությունը պարզելու համար

անհրաժեշտ բոլոր

տեղեկությունները բովանդակող հայտարարությունը եւ փաթեթների պարունակության

լրիվ ցանկը:

### ՀՐԴՎԱԾ 20 Վերաբերմունքը մահացածների նկատմամբ

Ըստիհարման մեջ գտնվող կողմերն անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն, որպեսզի

մահացածների ջրասուզումը տեղի ունենա որքան հնարավոր է անհատապես եւ որպեսզի

դրան նախորդի աճյունների ուշադիր եւ հնարավորության դեպքում՝ բժշկական զննում՝

մահվան արձանագրման, ինքնության հաստատման եւ հաշվետվություն ներկայացնելու

նպատակով: Այն դեպքերում, երբ օգտագործվում է ճանաչման կրկնակի մեղալիոն,

Նշանի կեսը պետք է մնա դիակի վրա:

Եթե մահացածներն ափ են իշեցվել, ապա նրանց նկատմամբ պետք է կիրառվեն

"Գործող բանակներում վիրավորների եւ հիվանդների վիճակի բարելավման մասին" 1949

թվականի օգոստոսի 12-ի ժնեւի կոնվենցիայի դրույթները:

### ՀՐԴՎԱԾ 21 Կոչ՝ չեզոք նավերին

Ըստիարման մեջ գտնվող կողմերը կարող են մարդասիրության կոչով դիմել չեզոք

առեւտրական նավերի, զբոսանավերի եւ փոքր նավերի նավապետներին,  
որպեսզի

վերջիններս իրենց նավի վրա վերցնեն եւ խնամեն վիրավորներին, հիվանդներին  
կամ

նավարեկյալներին, ինչպես նաև հավաքեն մահացածներին:

Բոլոր տեսակի նավերը, որոնք կարձագանքեն այդ կոչին, ինչպես նաև նրանք,  
որոնք իրենց նախաձեռնությամբ կիավաքեն վիրավորներին, հիվանդներին ու  
նավարեկյալներին, կօգտվեն առանձնահատուկ պաշտպանությունից եւ  
օժանդակությունից՝ իրենց օգնության առաքելությունը կատարելու համար:

Ոչ մի դեպքում դրանք չեն կարող զավթվել նման փոխադրման համար, սակայն,  
եթե

նրանց այլ բան չի խոստացվել, նրանք կարող են զավթվել չեզոքության  
խախտման

համար, որ նրանք կարող են կատարել:

### ԳԼՈՒԽ 3 ՆԱՎ-ՀԻՍԱՊԻՏԱԼՆԵՐԸ

#### ՀՐԴՎԱԾ 22

Ռազմական նավ-հիսապիտալների ծանուցումը եւ պաշտպանությունը

Ռազմական նավ-հիսապիտալները, այսինքն այն նավերը, որոնք տերությունների  
կողմից կառուցվել կամ սարքավորվել են հատկապես կամ միմիայն  
վիրավորներին,

հիվանդներին եւ նավարեկյալներին օգնություն եւ բուժօգնություն ցույց տալու եւ  
տեղափոխելու նպատակով, ոչ մի դեպքում չեն կարող հարձակման կամ  
զավթման

ենթարկվել, այլ մշտապես պետք է օգտվեն հարգանքից եւ պաշտպանությունից,  
պայմանով, որ դրանց անվանումները եւ բնութագրերը հաղորդվեն ընդհարման  
մեջ

գտնվող կողմերին՝ գործածությունից 10 օր առաջ:

Հաղորդման մեջ բովանդակվող տվյալներում պետք է նշվեն գրանցված  
բրուտոն-տոննաժը, նավի երկարությունը նավաքթից մինչեւ նավախել եւ կայմերի  
ու

ծխնելույզների թիվը:

#### ՀՐԴՎԱԾ 23

Ավամերձ սանիտարական հաստատությունների պաշտպանությունը

Ավամերձ հաստատությունները, որոնք գտնվում են 1949 թվականի օգոստոսի  
12-ի

"Գործող բանակներում վիրավորների եւ հիվանդների վիճակի բարելավման մասին"

Ժնեվի կոնվենցիայի հովանու ներքո, չպետք է ծովի կողմից հարձակման կամ գնդակոծման Ենթարկվեն:

### ՀՐԴՎԱԾ 24

Փրկարար ընկերությունների եւ մասնավոր անձանց նավ-հոսպիտալները:

I. Ըստհարման կողմին պատկանող

Կարմիր խաչի ազգային ընկերությունների, պաշտոնական ճանաչում ունեցող փրկարար ընկերությունների կամ մասնավոր անձանց կողմից օգտագործվող նավ-հոսպիտալներն օգտվում են նույն հովանավորությունից, ինչ ռազմական նավ-հոսպիտալները եւ չեն կարող զավթման Ենթարկվել, եթե ընդհարման մեջ գտնվող

կողմը, որից նրանք կախված են, նրանց պաշտոնական առաջադրանք է տվել, եւ եթե

հոդված 22-ում նախատեսված պայմանները կատարվել են:

Այս նավերը պետք է ունենալ համապատասխան իշխանություններից տրված փաստաթուղթ, որը հավաստի, որ նրանց զինավորումը եւ մեկնումը կատարվել է տվյալ

մարմնի հսկողության ներքո:

### ՀՐԴՎԱԾ 25

II. Չեզոք երկրներին պատկանող

Չեզոք երկրների Կարմիր խաչի ազգային ընկերությունների, պաշտոնական ճանաչում ունեցող փրկարար ընկերությունների կամ մասնավոր անձանց կողմից օգտագործվող նավ-հոսպիտալներն օգտվում են նույն հովանավորությունից, ինչ ռազմական նավ-հոսպիտալները եւ չեն կարող զավթման Ենթարկվել՝ պայմանով, որ

նրանք իրենց դնեն ընդհարման մեջ գտնվող կողմերից մեկի Ենթակայության տակ՝ իրենց պետության նախնական համաձայնությամբ եւ տվյալ կողմի թույլտվությամբ, եւ

եթե ապահովեն հոդված 22-ում նախատեսված պահանջները:

### ՀՐԴՎԱԾ 26

Տոննաժը

22, 24, 25 հոդվածներով նախատեսված հովանավորությունը տարածվում է ցանկացած տոննաժի նավ-հոսպիտալների, նրանց փրկարար մակույկների վրա՝ անկախ

նրանց գտնվելու վայրից: Այնուամենայնիվ առավելագույն հարմարավետության եւ

ապահովության նպատակով ընդհարման մեջ գտնվող կողմերը պետք է ջանան վիրավորների, հիվանդների եւ նավաբեկյալների փոխադրումը մեծ հեռավորություններով եւ բաց ծովով կազմակերպել 2000 բրուտոն-տոննայից ավելի

ջրատարողությամբ նավ-հոսպիտալներով:

### ՀՐԴՎԱԾ 27

Մերձափևյա փրկարար նավակները

Նույն պայմաններով, որոնք նախատեսված են 22 եւ 24 հոդվածներով, փոքր նավերը, որոնք օգտագործվում են պետության կամ պաշտոնապես ճանաչված փրկարար ընկերությունների կողմից՝ մերձափելյա փրկարար գործողությունների ժամանակ, նույնպես օգտվում են հարգանքից եւ հովանավորությունից այս չափով, որչափով թույլ են տալիս օպերատիկ պահանջները:

Նույն բանը հևարավորության սահմաններում վերաբերում է մշտական ափամերձ կառուցներին, որոնցից բացառապես օգտվում են փոքր նավերը՝ իրենց մարդասիրական գործողությունների կատարման ընթացքում:

### ՀՐԴՎԱԾ 28

#### Նավերի լազարեթների պաշտպանությունը

Ուազմանավերի վրա մարտի ընթացքում հարկ է լազարեթները հևարավորության սահմաններում պահպանել եւ խնայել: Այս լազարեթները եւ նրանց սարքավորումները ենթարկվում են պատերազմական օրենքների գործողությանը, սակայն չեն կարող այլ նպատակի ծառայել, քանի դեռ դրանք անհրաժեշտ են վիրավորներին եւ հիվանդներին: Այսուհետեւ անհապաղ ռազմական անհրաժեշտության դեպքում՝ նախապես պահովելով այնտեղ բուժվող վիրավորների եւ հիվանդների վիճակը:

### ՀՐԴՎԱԾ 29

#### Գրավյալ նավահանգստում հայտնված նավ-հոսպիտալը

Ամեն նավ-հոսպիտալ, որ գտնվում է թշնամու տիրապետության տակ անցած նավահանգստում, պետք է թույլտվություն ստանա դուրս գալ այդ նավահանգստից:

### ՀՐԴՎԱԾ 30

#### Նավ-հոսպիտալների եւ նավակների օգտագործումը

22, 24, 25 եւ 27 հոդվածներում նշված նավերն օգնություն եւ աջակցություն են ցույց տալիս վիրավորներին, հիվանդներին եւ նավաբեկյալներին՝ առանց ազգային խտրականության:

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են այս նավերը օգտագործել որեւէ ռազմական նպատակով:

Այս նավերը ոչ մի կերպ չպետք է խանգարեն մարտնչող կողմերի շարժումներին:

Մարտի ընթացքում եւ դրանից հետո նրանք գործում են ըստ իրենց պատասխանատվության:

### **ՅՈՂՎԱԾ 31**

#### **Վերահսկողության եւ այցի իրավունքը**

Ընդհարման մեջ գտնվող կողմերն իրավունք ունեն վերահսկելու եւ գննելու 22, 24, 25 եւ 27 հոդվածներում նշված նավերը: Նրանք կարող են հրաժարվել այդ նավերի

օգնությունից, նրանց հրամայել հեռանալ, նրանց պարտադրել հետեւելու որոշակի ուղղության, վերահսկողություն սահմանել նրանց ռադիոսարքավորումների եւ կապի

մյուս միջոցների նկատմամբ եւ նույնիսկ նրանց պահել առավելագույնը 7 օր՝ զննման

պահից սկսած, եթե իրավիճակի բարդությունն այդ է պահանջում:

Նրանք կարող են ժամանակավորապես նավի վրա կոմիսար նշանակել, որի միակ

պարտականությունը կլինի հսկել և ախորդ պարբերությունում նշված դրույթների հիման

վրա տրված հրամանների կատարմանը:

Յնարավորության սահմաններում ընդհարման մեջ գտնվող կողմերը նավ-հոսպիտալի

նավապետին հասկանալի լեզվով նավ-հոսպիտալի մատյանում կնշեն այն հրամանները, որ

իրենք նրան կտան:

Ընդհարման մեջ գտնվող կողմերը կարող են միակողմանիորեն կամ հատուկ համաձայնությամբ իրենց նավ-հոսպիտալների վրա նշանակել չեզոք դիտորդներ, որոնք

արձանագրեն սույն Կոնվենցիայի դրույթների հստակ կիրառումը:

### **ՅՈՂՎԱԾ 32**

#### **Չեզոք նավահանգստում գտնվելը**

22, 24, 25 եւ 27 հոդվածներում նշված նավերը չեն հավասարեցվում ռազմական նավերին՝ չեզոք նավահանգստում նրանց գտնվելու առումով:

### **ՅՈՂՎԱԾ 33**

#### **Նավ-հոսպիտալների վերածված առեւտրական նավերը**

Առեւտրական նավերը, որոնք կվերածվեն նավ-հոսպիտալների, չեն կարող այլ նպատակներով օգտագործվել պատերազմական գործողությունների ողջ ընթացքում:

### **ՅՈՂՎԱԾ 34**

#### **Հովանավորության դադարեցումը**

Նավ-հոսպիտալների եւ նավերի լազարեթների վրա տարածվող հովանավորությունը

կարող է դադարեցվել միայն այն դեպքում, եթե դրանք օգտագործվեն իրենց մարդասիրական պարտականություններից բացի այնպիսի գործողություններում, որոնք

ուղղված լինեն հակառակորդի դեմ: Սակայն այդ հովանավորությունը կդադարի միայն

համապատասխան զգուշացումից հետո, որը, բոլոր անհրաժեշտ դեպքերում, կսահմանի

խելամիտ ժամկետ եւ այն բանից հետո, երբ այն արդյունք չտա:

Մասնավորապես նավ-հոսպիտալները չեն կարող գաղտնի կող ունենալ իրենց ռադիոհաղորդիչի կամ ցանկացած այլ կապի միջոցի համար:

### ՀՐԴՎԱԾ 35

Յանգամանքները, որոնք հովանավորության դադարեցման հիմք չեն կարող լինել

Որպես նավ-հոսպիտալները կամ նավի լազարեթները անհրաժեշտ հովանավորությունից գրկող հանգամանքներ չեն դիտարկվի.

1) այն փաստը, որ նավի կամ լազարեթի անձնակազմը գինված է եւ զենքն օգտագործում է կարգուկանոնի պահպանման, ինքնապաշտպանության կամ վիրավորներին

ու հիվանդներին պաշտպանելու նպատակով,

2) այն փաստը, որ նավի վրա կան սարքեր, որոնք բացառապես նախատեսված են

նավարկությունը եւ կապն ապահովելուն,

3) այն փաստը, որ նավ-հոսպիտալների վրա կամ նավի լազարեթներում գտնվում են

ձեռքի զենքեր եւ զինամթերք՝ վերցված վիրավորներից, հիվանդներից եւ նավաբեկյալներից, եւ որոնք դեռեւս չեն հանձնվել պետական ծառայություններին,

4) այն փաստը, որ նավ-հոսպիտալների եւ նավի լազարեթների եւ դրանց անձնակազմերի մարդասիրական գործունեությունը տարածվում է վիրավոր, հիվանդ կամ

նավաբեկյալ քաղաքացիական անձանց նկատմամբ,

5) այն փաստը, որ նավ-հոսպիտալները տեղափոխում են իրենց սովորական կարիքներից ավելի միջոցներ եւ անձնակազմ, որոնք բացառապես սանհիտարական

նպատակների համար են նախատեսված:

### ԳԼՈՒԽ 4 ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

### ՀՐԴՎԱԾ 36

Նավ-հոսպիտալների անձնակազմի պաշտպանությունը

Նավ-հոսպիտալների հոգեւոր, բժշկական եւ հոսպիտալային անձնակազմը եւ նրանց

մասցած անձնակազմը հարգանք եւ հովանավորություն են վայելում. Նրանք չեն կարող

գերեվարվել նավի վրա իրենց ծառայության ընթացքում, անկախ այն հանգամանքից՝

վիրավորներ ու հիվանդներ կան դրա վրա, թե ոչ:

### ՀՐԴՎԱԾ 37

Այլ նավերի սանհիտարական եւ հոգեւոր անձնակազմը

Հոգեւոր, բժշկական եւ հոսպիտալային անձնակազմը, որը նախատեսված է 12 եւ 13

հոդվածներում նշված անձանց բժշկական եւ հոգեւոր սպասարկումն ապահովելու համար,

այն դեպքում, երբ ընկնի թշնամու ձեռքը, պետք է վայելի հարգանք եւ հովանավորություն. նա կկարողանա շարունակել իր պարտականությունների կատարումն

այնքան ժամանակ, որքան դա անհրաժեշտ է վիրավորների եւ հիվանդների խնամքի

համար: Այսուհետեւ անձնակազմը հետ պետք է ուղարկվի, հենց որ գլխավոր հրամանատարը, որի իշխանության ներքո գտնվում է, դա հնարավոր համարի:

Նավը

թողնելիս նա իր հետ կարող է տանել իր անձնական սեփականությունը հանդիսացող

իրերը:

Եթե այսուամենայնիվ անհրաժեշտություն է առաջանում այս անձնակազմի մի մասին

պահել նավի վրա՝ ռազմագերիների սանհիտարական կամ հոգեւոր կարիքները հոգալու

նպատակով, բոլոր միջոցները կձեռնարկվեն նրանց հնարավորին չափ արագ ափ իշեցնելու համար:

Ափ իշնելուց հետո պահված անձնակազմի վրա տարածվում են "Գործող բանակներում"

Վիրավորների եւ հիվանդների վիճակի բարելավման մասին" 1949 թվականի օգոստոսի

12-ի ժնեւի կոնվենցիայի դրույթները:

#### Գլուխ 5 Սանհիտարական տրանսպորտները

##### ՀՐԴՎԱԾ 38

Սանհիտարական նյութեր եւ միջոցներ տեղափոխելու համար վարձված նավերը

Այս նպատակով վարձված նավերին թույլ կտրվի տեղափոխել բացառապես գինված

ուժերի վիրավորների եւ հիվանդների բուժսպասարկման եւ հիվանդությունների կանխարգելման համար նախատեսված նյութեր եւ միջոցներ, պայմանով, որ նրանց

երթուղու հետ կապված տվյալները հաղորդվեն հակառակորդ տերությանը, եւ նա տա իր

համաձայնությունը: Յակառակորդ տերությունն իրավունք ունի նավերի գննում կատարել, սակայն չի կարող զավթել նավերը կամ բռնագրավել տեղափոխվող նյութերն

ու միջոցները:

Ընդհարման մեջ գտնվող կողմերի հետ համաձայնեցնելով՝ նավերի վրա կարող են

տեղավորվել չեզոք դիտորդներ՝ տեղափոխվող նյութերն ու միջոցները ստուգելու նպատակով: Այդ նպատակով նյութերը պետք է նրանց մատչելի լինեն:

#### ՀՐԴՎԱԾ 39 Սանհիտարական թռչող ապարատները

Սանհիտարական թոշող ապարատները, այսինքն բացառապես վիրավորների, հիվանդների

եւ նավարեկյալների տարահանման, ինչպես նաեւ բուժանձնակազմի եւ միջոցների

փոխադրման համար օգտագործվող սարքերը հարձակման չեն Ենթարկվի, այլ հարգանքի

կարժանանան ընդհարման մեջ գտնվող կողմերից այն թոհջըների ընթացքում, որոնք

կկատարվեն ընդհարման մեջ գտնվող բոլոր շահագրգիռ կողմերի միջեւ հատուկ համաձայնեցված բարձրությամբ, ժամերին եւ երթուղիներով:

Դրանք կկրեն 41 հոդվածով նախատեսված պարզորոշ երեւացող տարրերանշան՝

ազգային գույների կողքին, ստորին, վերին եւ կողերի հարթություններում: Դրանք կկրեն ցանկացած այլ ազդանշան կամ տարրերիչ նշան, որ ընդհարման մեջ գտնվող

կողմերը համաձայնությամբ կսահմանեն ռազմական գործողությունների սկզբում կամ

ընթացքում:

Բացի հակառակ բնույթի համաձայնության դեպքերի, հակառակորդի տարածքի կամ

հակառակորդի կողմից գրավված տարածքի վրայով թոշելն արգելվում է:

Սանհիտարական թոշող ապարատները պետք է Ենթարկվեն վայրեջքի կամ ջրի վրա

իշնելու ցանկացած պահանջի: Պարտադրված վայրեջքից կամ ջրի վրա իշնելուց հետո

թոշող ապարատը՝ իր ուղեւորներով հանդերձ, կարող է շարունակել թոհջըք՝ հնարավոր

ստուգումից հետո:

Թշնամու տարածքում կամ թշնամու կողմից գրավված տարածքում թոշող ապարատի

հարկադրական վայրեջքի կամ ծովի վրա իշնելու դեպքում վիրավորները, հիվանդները

եւ նավարեկյալները, ինչպես նաեւ թոշող ապարատի անձնակազմը, դառնում են ռազմագերիներ: Բուժանձնակազմի հետ կվարվեն 36 եւ 37 հոդվածների համաձայն:

### ՀՐԴՎԱԾ 40

Թոհջըք չեզոք երկրների տարածքով: Սանհիտարական ապարատից իշեցված վիրավորները

Ընդհարման մեջ գտնվող կողմերի սանհիտարական թոշող ապարատները կարող են

սույն հոդվածի երկրորդ պարբերության մեջ շարադրված պայմանները պահպանելով՝

թոշել չեզոք տերությունների տարածքով եւ, անհրաժեշտության դեպքում կամ միջանկյալ կանգառի համար, այնտեղ վայրեջք կատարել: Նրանք պետք է չեզոք տերություններին նախապես տեղյակ պահեն նրանց տարածքով իրենց թոհջքի մասին եւ

Ենթարկվեն վայրեջք կատարելու կամ ջրի վրա նստելու ամեն մի պահանջի: Նրանք

հարձակումից պաշտպանված կլինեն միայն այն դեպքում, եթե թոշեն ըստ այն

բարձրությունների, ժամերի եւ երթուղիների, որոնք հատուկ սահմանված են ընդհարման մեջ գտնվող կողմերի եւ շահագրգիռ չեզոք տերությունների միջեւ կնքված

համաձայնությամբ:

Սակայն չեզոք տերությունները կարող են սանիտարական թռչող ապարատների՝

իրենց տարածքով թռիչք կամ վայրէջք կատարելու վերաբերյալ սահմանել պայմաններ

կամ սահմանափակումներ: Այդ հնարավոր պայմանները կամ սահմանափակումները

հավասարապես կիրառվեն բոլոր ընդհարման մեջ գտնվող կողմերի նկատմամբ:

Տեղի իշխանությունների համաձայնությամբ, չեզոք տարածքում սանիտարական

թռչող ապարատից իշեցված վիրավորները, հիվանդները եւ նավաբեկյալները, եթե չեզոք

պետության եւ ընդհարման մեջ գտնվող կողմերի միջեւ չկա այլ բնույթի պայմանափորվածություն, պետք է չեզոք պետության կողմից պահպես այնպես, որպեսզի

այն դեպքերում, երբ դա պահանջում է միշագգային իրավունքը, նրանք չկարողանան

կրկին մասնակցել ռազմական գործողություններին: Ցոսպիտալացման եւ ներկայման

ծախսները պետք է կատարի այն տերությունը, որին պատկանում են այդ վիրավորները եւ

հիվանդները:

#### Գլուխ 6 Տարբերանշանը

#### ՀՐԴՎԱԾ 41 Տարբերանշանի կիրառումը

Իրավասու գինվորական մարմնի հսկողության ներքո սպիտակ ֆոնի վրա կարմիր

խաչի նշանը պատկերված կլինի դրոշների, թեւկապերի, ինչպես նաև սանիտարական

ծառայության հետ առնչվող բոլոր առարկաների վրա:

Սակայն այս երկրների վերաբերմամբ, որոնք կարմիր խաչի փոխարեն որպես տարբերանշան արդեն գործածում են սպիտակ ֆոնի վրա կարմիր մահիկը կամ կարմիր

առյուծն ու արեւը, այս նշանները հավասարապես թույլատրվում են սույն Կոնվենցիայի իմաստով:

#### ՀՐԴՎԱԾ 42 Սանիտարական եւ հոգեւոր անձնակազմի ճանաչումը

36 եւ 37 հոդվածներում նշված անձնակազմը ծախս թեւին կրի խոնավությունից չի հացող տարբերանշանով թեւկապ, որը տրվում եւ կնիքով հաստատվում է գինվորական

իշխանությունների կողմից:

Այդ անձնակազմը, ի լրում 19 հոդվածում նշված ճանաչման մեջալիոնների,

կունենա նաեւ տարբերանշանով՝ անձնական հատուկ վկայական: Այդ վկայականը չպետք է փշանա խոնավությունից եւ պետք է լինի այնպիսի չափերի, որպեսզի կարելի լինի այն կրել գրպանում: Այս պետք է կազմված լինի համապատասխան երկրի լեզվով, եւ նրա մեջ պետք է նշվեն առևվազն դրա տիրոջ ազգանունը եւ անունը, ծննդյան թիվը, կոչումը եւ գինվորական համարը, ինչպես նաեւ, թե նա ինչ կարգավիճակով սույն Կոնվենցիայի հովանավորությունից օգտվելու իրավունք ունի: Վկայականում պետք է լինեն դրա տիրոջ լուսանկարը, ինչպես նաեւ նրա ստորագրությունը կամ մատնահետքերը, կամ՝ թե մեկը եւ թե մյուսը: Վկայականի վրա պետք է լինի գինվորական իշխանությունների ուռուցիկ կնիքը:

Անձնական վկայականը յուրաքանչյուր բանակում պետք է լինի միատեսակ եւ, որքան դա հնարավոր է, Բարձր պայմանավորվող կողմերի բոլոր բանակներում՝ միատիպ:

Ընդհարման մեջ գտնվող կողմերը կարող են դեկավարվել այն նմուշով, որը որպես օրինակ կցված է սույն Կոնվենցիային: Ուզմական գործողությունների սկզբում նրանք միմյանց տեղյակ կպահեն իրենց կողմից ընդունված նմուշի մասին: Ամեն մի վկայական, ըստ հնարավորին, պետք է պատրաստված լինի երկու օրինակից ոչ պակաս,

որոնցից մեկը կպահվի այն տերության կողմից, որին պատկանում է տվյալ անձը:

Ոչ մի դեպքում վերոհիշյալ անձնակազմը չի կարող գրկվել իր տարբերանշաններից

կամ վկայականներից եւ թեկապ կրելու իրավունքից: Դրանք կորսվելու դեպքում նա իրավունք կունենա ստանալու վկայականների եւ տարբերանշանների կրկնօրինակները:

### ՀՐԴՎԱԾ 43 Նավ-հոսպիտալների եւ նավակների նշումը

22, 24, 25 եւ 27 հոդվածներում նշված նավերը հետեւյալ ձեռով են տարբերակվում.

ա) արտաքին բոլոր մակերեսները պետք է սպիտակ լինեն,  
բ) մուգ կարմիր մեկ կամ մի քանի հնարավորին չափ մեծ խաչ պետք է պատկերված

լինի նավի յուրաքանչյուր կողին, ինչպես նաեւ հորիզոնական մակերեսներին այնպես,

որ ապահովվի լավագույն տեսանելիությունը ծովից եւ օդից:

Բոլոր նավ-հոսպիտալներն իրենց ճանաչել տալու նպատակով կբարձրացնեն իրենց

ազգային դրոշը եւ, բացի այդ, եթե նրանք պատկանում են չեղոք պետության, այն ընդհարման մեջ գտնվող կողմին դրոշը, որի տրամադրության տակ իրենց դրել են: Մեծ

կայմին հնարավորին չափ բարձր պետք է փողփողա սպիտակ ֆոնի վրա կարմիր խաչով:

դրոշը:

Նավ-հոսպիտալների փրկարար մակույկները, ափամերձ փրկարար նավակները, ինչպես

Նաեւ բժշկական ծառայության կողմից օգտագործվող բոլոր փոքր նավերը պետք է սպիտակ ներկվեն՝ պարզորոշ երեւացող մուգ կարմիր խաչով, եւ, ընդհանուր առմամբ,

Նավ-հոսպիտալների համար վերը նշված տարբերիչ նշանները կիրառելի են նաեւ սրանց

Նկատմամբ:

Վերը նշված նավերը, որոնք գիշերային ժամերին եւ սահմանափակ տեսանելիության

պայմաններում իրենց համար ցանկանում են ապահովել այն հովանավորությունը, որի

իրավունքն ունեն, պետք է ընդհարման մեջ գտնվող այն կողմի համաձայնությամբ, որի

տրամադրության տակ գտնվում են, անհրաժեշտ միջոցներ ձեռևարկեն՝ իրենց գունավորումը եւ տարբերանշանները բավականին տեսանելի դարձնելու համար:

Նավ-հոսպիտալները, որոնք 31 հոդվածի համաձայն ժամանակավորապես պահպում են

թշնամու կողմից, պետք է իշեցնեն այն ընդհարման մեջ գտնվող կողմի դրոշը, որին

Նրանք ծառայում են կամ որի դեկավարության տակ դրվել են:

Ավամերձ փրկարար նավակները, եթե դրանք շարունակում են գործել գրավող տերության համաձայնությամբ գրավված կայանից, կարող են թույլտվություն ստանալ

Եւ շարունակել բարձրացնել իրենց ազգային դրոշը կարմիր խաչով դրոշի հետ մեկտեղ,

Երբ հեռանան իրենց կայանից, պայմանով, որ այդ մասին նախապես գգուշացվեն շահագրգիռ ընդհարման մեջ գտնվող բոլոր կողմերը:

Սույն հոդվածի կարմիր խաչի նշանին վերաբերող բոլոր դրույթները հավասարապես

Կիրառելի են 41 հոդվածում նշված մյուս խորհրդանշանների նկատմամբ:

Ընդհարման մեջ գտնվող կողմերը մշտապես պետք է շանան համաձայնությունների

գալ, որպեսզի իրենց տրամադրության տակ եղած բոլոր ամենաարդիական մեթոդներն

օգտագործեն սույն հոդվածում նշված նավերի ճանաչումը դյուրացնելու համար:

#### ՀՈԴՎԱԾ 44

Տարբերանշանների օգտագործման սահմանափակումը

43 հոդվածում նշված տարբերանշանները խաղաղ թե պատերազմի ժամանակ կարող են

օգտագործվել միայն նշված նավերը տարբերակելու կամ պաշտպանելու համար, բացառությունները կարող են պայմանավորվել կամ որեւէ այլ միջազգային կոնվենցիայով, կամ ընդհարման մեջ գտնվող բոլոր շահագրգիռ կողմերի համաձայնությամբ:

#### ՀՈԴՎԱԾ 45

Տարբերանշանների չարաշահումների կանխումը

Բարձր պայմանավորվող կողմերը, այն դեպքում եթե նրանց գործող օրենսդրությունը դեռեւս բավարար չէ, անհրաժեշտ միջոցներ ձեռք կառնեն՝ մշտապես

կանխելու եւ խափանելու 43 հոդվածում նշված տարբերանշանների չարաշահումները:

**Գլուխ 7**  
**Կոնվենցիայի կատարումը**

**ՀՈԴՎԱԾ 46**  
**Կատարման մանրամասները եւ չնախատեսված դեպքերը**

Ըսդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ իր գլխավոր հրամանատարների միջոցով պետք է հոգ տանի նախորդ հոդվածների կատարման մանրամասների մասին,  
ինչպես նաև չնախատեսված դեպքերի կապակցությամբ՝ սույն Կոնվենցիայի ընդհանուր  
դրույթներին համապատասխան:

**ՀՈԴՎԱԾ 47**  
**Փոխճշումների արգելումը**

Կոնվենցիայի պաշտպանության ներքո գտնվող վիրավորների, հիվանդների,  
նավարեկյալների, անձնակազմի, նավերի եւ գույքի նկատմամբ փոխճնշման  
միջոցների  
կիրառում արգելվում է:

**ՀՈԴՎԱԾ 48**  
**Կոնվենցիայի տարածումը**

Բարձր պայմանավորվող կողմերը պայմանավորվում են ինչպես խաղաղ,  
այնպես ել  
պատերազմի ժամանակ հնարավորին չափ լայնորեն տարածել սույն  
Կոնվենցիայի տեքստն  
իրենց երկրներում, եւ, մասնավորապես, Կոնվենցիայի ուսումնասիրումը մտցնել  
ռազմական եւ, եթե հնարավոր է, քաղաքացիական կրթության ծրագրերի մեջ,  
որպեսզի  
Կոնվենցիայի սկզբունքներին ծանոթանա ընդհանուր առմամբ ամբողջ  
ընակչությունը,  
եւ մասնավորապես, կռվող զինված ուժերը, բուժանձնակազմը եւ  
հոգեւորականները:

**ՀՈԴՎԱԾ 49**  
**Թարգմանությունները: Կիրառման օրենքները**

Բարձր պայմանավորվող կողմերը Շվեյցարիայի Դաշնային խորհրդի  
միջնորդությամբ, իսկ ռազմական գործողությունների ժամանակ՝ հովանավոր  
տերությունների միջոցով, միմյանց կիանձնեն սույն Կոնվենցիայի տեքստերի  
պաշտոնական թարգմանությունները, ինչպես նաև այն օրենքներն ու  
որոշումները,  
որոնք նրանք կարող են ըստունել Կոնվենցիայի կիրառում ապահովելու  
նպատակով:

## Չարաշահումների Եւ խախտումների կանխումը

### ՀՐԴՎԱԾ 50

Քրեական պատիժները: I. Ընդհանուր դրույթներ

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են գործողության մեջ դնել օրենսդրություն, որն անհրաժեշտ է այն անձանց քրեական արդյունավետ պատիժների

ապահովման համար, ովքեր կատարել կամ հրամայել են կատարել սույն Կոնվենցիայի

այս կամ այն լուրջ խախտումները, որոնք նշված են հաջորդ հոդվածում:

Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ պարտավորվում է որոնել այն անձանց, ովքեր մեղադրվում են նրանում, որ կատարել կամ հրամայել են կատարել հիշատակված

լուրջ խախտումներից որեւէ մեկը եւ, ինչպիսին էլ որ լինի քաղաքացիությունը, նրանց հանձնել իր դատարանին: Նա կարող է նաեւ, եթե ցանկանա, եւ իր օրենսդրության դրույթներին համապատասխան, դատելու համար նրանց հանձնել մեկ այլ

շահագրգիռ պայմանավորվող կողմի այն դեպքում, եթե այդ պայմանավորվող կողմն այդ

անձանց մեղադրելու համար հիմք հանդիսացող բավարար ապացույցներ ունի:

Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ, բացի հաջորդ հոդվածում թվարկված լուրջ

խախտումներից, կծեռնարկի միջոցներ, որոնք անհրաժեշտ են կասեցնելու համար սույն

Կոնվենցիայի դրույթներին հակասող մյուս գործողությունները:

Բոլոր հանգամանքներում մեղադրվող անձինք կօգտվեն դատական պատշաճ ընթացակարգի երաշխիքներից եւ պաշտպանության իրավունքից, որոնք չեն կարող նվազ

նպաստավոր լինել, քան այն երաշխիքները, որոնք նախատեսված են

"Ռազմագերիների

հետ վարվելակերպի մասին" 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի Կոնվենցիայի 105 եւ

հաջորդ հոդվածներով:

### ՀՐԴՎԱԾ 51

II. Լուրջ խախտումները

Նախորդ հոդվածում հիշատակված լուրջ խախտումների թվին են պատկանում այն

խախտումները, որոնք կապված են հետեւյալ գործողություններից մեկն ու մեկի հետ

այն դեպքում, եթե այդ գործողություններն ուղղված են սույն Կոնվենցիայի հովանավորությունից օգտվող անձանց կամ գույքի դեմ. կանխամտածված սպանությունը,

խոշտանգումները եւ անմարդկային վարվելակերպը, ներառյալ՝ կենսաբանական փորձերը,

կանխամտածված կերպով ծանր տառապանքի եւ լուրջ խեղման ենթակելը, առողջությանը

վնաս հասցնելը, գույքի անօրինական, կամայական եւ մեծ չափերի հասնող ավերումը

Եւ յուրացումը, որոնք չեն բխում ռազմական անհրաժեշտությունից:

### ՀՈԴՎԱԾ 52

#### III. Պայմանավորվող կողմերի պատասխանատվությունը

Ոչ մի Բարձր պայմանավորվող կողմի թույլ չի տրվի իրեն կամ որեւէ այլ պայմանավորվող կողմի ազատել այն պատասխանատվությունից, որը նրա կամ այլ

պայմանավորվող կողմի վրա է դրվում նախորդ հոդվածով նախատեսված խախտումների հետեւանքով:

### ՀՈԴՎԱԾ 53

#### Հետաքննության ընթացակարգը

Ընդհարման մեջ գտնվող կողմերից մեկնումեկի խնդրանքով Կոնվենցիայի խախտման

մասին ցանկացած պնդման առթիվ հետաքննություն պետք է սկսվի շահագրգիռ կողմերի

միջեւ սահմանման ենթակա ընթացակարգով:

Հետաքննության ընթացակարգի հարցում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, կողմերը, փոխադարձ պայմանավորվածությամբ, ընտրում են միջնորդ դատավոր, որը որոշում է ընթացակարգի հարցը:

Յենց որ խախտումը պարզվի, ընդհարման մեջ գտնվող կողմերը կկասեցնեն այս եւ

հնարավոր կարճ ժամկետում դրա համար պատժելու միջոցներ կձեռնարկեն:

#### Եզրափակիչ դրույթներ

### ՀՈԴՎԱԾ 54

#### Լեզուները

Սույն Կոնվենցիան կազմված է ֆրանսերեն եւ անգլերեն լեզուներով: Երկու տեքստերն ել հավասարապես նույնական են:

Ծվեյցարիայի Դաշնային խորհուրդը կապահովի Կոնվենցիայի պաշտոնական թարգմանությունները ոուսերեն եւ իսպաներեն լեզուներով:

### ՀՈԴՎԱԾ 55

#### Ստորագրումը

Ներկա ամսաթվով թվագրված սույն Կոնվենցիան մինչեւ 1950 թվականի փետրվարի

12-ը կարող է ստորագրվել 1949 թվականի ապրիլի 21-ին Ժնեվում բացված համաժողովին ներկայացված բոլոր տերությունների, ինչպես նաև այդ համաժողովին

չներկայացված տերությունների կողմից, որոնք մասնակից են 1907 թվականի հոկտեմբերի 18-ի Դատագայի Խ կոնվենցիային՝ 1906 թվականի Ժնեվի կոնվենցիայի սկզբունքները ծովային պատերազմում կիրառելու համար, կամ "Գործող բանակներում"

Վիրավորների եւ հիվանդների վիճակի բարելավման մասին" 1864, 1906 կամ 1929 թվականների Ժնեվի կոնվենցիաներին:

### **ՀՐԴՎԱԾ 56 Վավերացումը**

Սույն Կոնվենցիան կվավերացվի հնարավորին չափ արագ, եւ վավերագրերն ի պահ

կիանձնվեն Բեռնում:

Յուրաքանչյուր վավերագրի հանձնման մասին կկազմվի աղծանագրություն, որի

հաստատված պատճենը Շվեյցարիայի Դաշնային խորհրդի կողմից կիանձնվի բոլոր այն

տերություններին, որոնց անունից կստորագրվի Կոնվենցիան կամ

հայտարարություն

կարվի դրան միանալու մասին:

### **ՀՐԴՎԱԾ 57 Ուժի մեջ մտնելը**

Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի վեց ամիս անց այն բանից հետո, եթե

առևազն երկու վավերագրի ի պահ կիանձնվի:

Եթագայում Կոնվենցիան յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմից համար

ուժի մեջ կմտնի նրա վավերագրին ի պահ տալուց վեց ամիս անց:

### **ՀՐԴՎԱԾ 58 Առնչությունը 1907 թվականի Կոնվենցիայի հետ**

Սույն Կոնվենցիան Բարձր պայմանավորվող կողմերի միջեւ հարաբերություններում

իրենով փոխարինում է 1907 թվականի հոկտեմբերի 18-ի Յագայի X Կոնվենցիան՝ 1906

թվականի ժնեւի կոնվենցիայի սկզբունքները ծովային պատերազմում կիրառելու վերաբերյալ:

### **ՀՐԴՎԱԾ 59 Միացումը**

Ուժի մեջ մտնելու օրից սույն Կոնվենցիան բաց կլինի դրան միանալու համար ամեն մի տերության առջեւ, որի անունից այդ Կոնվենցիան չի ստորագրվել:

### **ՀՐԴՎԱԾ 60 Միանալու մասին ծանուցումները**

Յուրաքանչյուր միանալու մասին գրավոր կիայտնվի Շվեյցարիայի Դաշնային խորհրդին, եւ միանալս ուժի մեջ կմտնի վերջինիս կողմից այդ հայտարարությունն ստանալու օրից վեց ամիս հետո:

Շվեյցարիայի Դաշնային խորհրդը միանալու մասին կհաղորդի այն տերություններին, որոնց անունից ստորագրվել է Կոնվենցիան կամ միանալու մասին հայտարարություն Ե արվել:

## ՀՈԴՎԱԾ 61

### ԱՆՄԻՋԱՎԵՍ ՈՒԺԻ ՄԵԶ ԿՈՆԵՆ Ի ՊԱՀ

2 Եւ 3 հոդվածներում նախատեսված դեպքերն անմիջապես ուժի մեջ կղնեն ի պահ  
տրված վավերագրերը, ինչպես նաև միանալու հայտարարությունները, որոնց  
մասին  
ընդհարման մեջ գտնվող պետությունների կողմից կիայտնվի մինչեւ ռազմական  
գործողություններն սկսվելը կամ գրավումը կամ դրանից հետո: Ըվեյցարիայի  
Դաշնային խորհուրդն ամենաարագ կերպով կիադորդի ընդհարման մեջ գտնվող  
կողմերից  
ստացված վավերացումների կամ միանալու մասին:

## ՀՈԴՎԱԾ 62

### ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը հնարավորություն կունենա  
չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան:

Չեղյալ հայտարարելու մասին պետք է գրավոր հայտնվի Ըվեյցարիայի  
Դաշնային  
խորհրդին, որև այդ մասին կիադորդի բոլոր Բարձր պայմանավորվող կողմերի  
կառավարություններին:

Չեղյալ հայտարարվելը ուժի մեջ կմտնի միայն Ըվեյցարիայի Դաշնային  
խորհրդին  
արկած հայտարարությունից մեկ տարի անց: Սակայն, չեղյալ հայտարարվելը,  
որի  
մասին հայտարարությունն արվել է այն ժամանակ, երբ չեղյալ հայտարարող  
տերությունը մասնակցելիս է եղել ընդհարմանը, չի կարող ուժ ունենալ մինչեւ  
հաշտություն կնքելը եւ, համենայնդեպս, քանի դեռ չեն ավարտվել սույն  
Կոնվենցիայի հովանավորությունից օգտվող անձանց ազատման եւ  
հայրենադարձության  
գործողությունները:

Չեղյալ հայտարարվելն ուժ կունենա միայն չեղյալ հայտարարող տերության  
վերաբերմամբ: Այն ոչ մի կերպ չի կարող ազդել այն պարտավորությունների վրա,  
որոնք ընդհարման մեջ գտնվող կողմերը պարտավոր կինեն շարունակել  
կատարել  
միջազգային իրավունքի սկզբունքների ուժով, քանի որ դրանք բխում են  
քաղաքակիրթ  
ժողովուրդների միջեւ սահմանված սովորություններից, մարդասիրության  
օրենքներից եւ  
հանրային խղճի հրամայականից:

## ՀՈԴՎԱԾ 63

### ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՋԳԵՐԻ ԿԱԳՄԱԿԵՐԱՓՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ըվեյցարիայի Դաշնային խորհուրդը սույն Կոնվենցիան կգրանցի Միավորված  
ազգերի կազմակերպության քարտուղարությունում: Ըվեյցարիայի Դաշնային  
խորհուրդը

Միավորված ազգերի կազմակերպությանը կիադորդի նաեւ այն բոլոր  
վավերացումների,  
միանալու եւ չեղյալ հայտարարելու մասին, որոնք սույն Կոնվենցիայի

կապակցությամբ կստացվեն:

Ի հավաստումն որի, համապատասխան լիազորություններ ներկայացնելով՝  
ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Ժնևում, 1949 թվականի օգոստոսի 12-ին, ֆրանսերեն եւ  
անգլերեն

լեզուներով: Սույն Կոնվենցիայի բնօրինակը կպահվի Շվեյցարիայի  
Համադաշնության

արխիվներում: Կոնվենցիայի հաստատված պատճենները Շվեյցարիայի  
Դաշնային խորհրդի

Կողմից կհանձնվեն Կոնվենցիան ստորագրած կամ դրան միացած յուրաքանչյուր  
պետության:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

Անձնական վկայականի ձեւը

Երեսի կողմը

| (այս երկրի եւ գինվորական իշխանությունների անվան տեղը, որոնք տվել են |  
| վկայականը) |  
| |  
| ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՅԱՎԱԾ |  
| |  
| լինված ուժերին կցված սանհիտարական եւ հոգեւոր անձնակազմի անդամների  
համար |  
| |  
| Ազգանուն |  
| Անուն |  
| Ծննդյան թիվը |  
| Կոչումը |  
| Զորային համարը |  
| Սույն ինքնության վկայականի տերը պաշտպանված է Ծովում գինված ուժերի  
լիազմից վիրավորների, հիվանդների եւ նավաբեկյալների վիճակի բարելավման  
մասին |  
| 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի Կոնվենցիայով որպես |  
| Տրված է Վկայականի N |

Հակառակ երեսը

|| |  
|| |  
|\_\_\_\_\_ |

Վկայականի տիրոջ լուսանկարը	Վկայականի տիրոջ ստորագրությունը!		
կամ բութ մատի մատևահետքը եւ կամ			
Երկուսն էլ			
Վկայական տված զինվորական իշխանությունների ցցուն կնիքը			
Հասակը	Աչքերը	Մազերը	
Մյուս բնորոշ նշանները			

---

\* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 7-ից: